

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՅՈՒՐԻ ՔԱԶՈՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԻՐԻ ՔԱԶՈՅԵԱՆ,
ՈՐ Ի ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴ, ՌԴ**

Յարգարժան պրն Քաջոյեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ գոհութեան աղօթք բարձրացնելով առ Ամենակալն Աստուած, որ այսօր Ձեր բարեբարութեամբ հայկական մի նոր եկեղեցի է օծուում Ռուսաստանի Դաշնութիւնում՝ ի ծառայութիւն Քրիստոսասէր մեր ժողովրդի: Փառք Երկնաւորին, որ հայութեան մէջ արթուն եւ արարող է բարեգործութեան ոգին, որ հաւատաւոր Մեր զաւակները հասարակական կեանքում արձանագրած յաջողութիւնները ի սպաս են դնում ազգային մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Տիրոջ կամքով ուրախ առիթն ունենք բարձր շնորհի արժանացնելու մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ, որ ի յաւելումն Ձեր երկարամեայ եկեղեցաւուէր ընթացքի, ազնիւ ոգով ստանձնեցիք նաեւ Կալինինգրադ քաղաքում եկեղեցու կառուցման հովանաւորութիւնը: Յանուն Սուրբ Ստեփաննոս Նախավկայի օծուած եկեղեցու աղօթաբոյր յարկի ներքոյ բարեպաշտ հաւատացեալները պիտի փառաբանեն Բարձրեալ Տիրոջը եւ Աստուածային օրհնութեամբ առաւել հաստատուն հաւատքի ու եկեղեցաւուիրումի մէջ՝ արժանայիշատակ գործերով հարստացնելով համայնքի պատմութիւնը: Եկեղեցին նոր հնարաւորութիւն պիտի ընձեռնի նաեւ, որպէսզի հեռաւոր Կալինինգրադ քաղաքում ծնուած եւ հասակ առած մեր նոր սերունդը հաղորդ դառնայ հայրենեաց ժառանգութեանը, հայ մշակոյթին, ազգային եւ հոգեւոր մեր արժէքներին:

Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր գնահատանքը եւ, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ միշտ եռանդուն ու կորովաշատ շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ արժանացնելով Իր առատ ողորմութեանն ու բիւր շնորհներին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 360